



ՆԵՐԳԱՂԹԸ ԵՎ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՆԱՄԱԿ ՊԱՆԵՍՏԻՆԻՑ



Մրկու ամիսներն ի վեր պաղես-տինա հայությունը եղալի ո. գետրիչ եռուզեոը ներգաղթի օրերուն: Անցյալ հոկտեմբերին ի վեր Ս. Հակոբյանց Մայրավանդը, իբրե կեդրոնը բոլոր պատրաստությանց, առա-վոտեմ մինչ իրիկուն լեցուն կըլլար բաղմո-թյամբ: Երուսաղեմի Ս. Աթոռին Գահակալ Ամեն. Տ. Կյուրեղ Բ. Ս. Պատրիարք Հոր հրա-մանով վանքին թարգմանատունը և հարակից սենյակները հատկացված էին: Ներգաղթի պատրաստությանց արձանագրությանց և բը-ժըշկական քննության ու այլ հարկավոր գոր-ծողությանց համար: Հոս շենք կրնար չհիշել լայնորեն այն հոգածու վերաբերմունքը, զոր ներգաղթողներու և ներգաղթի նկատմամբ ցույց տվին Երուսաղեմի Ս. Պատրիարքը և Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի Միաբա-նությունը:

Դեռ 1947 թ. հոկտեմբեր 4-ին Ս. Հակոբ-յանց վանքի տաճարին մեջ տեղի ունեցավ հատուկ պատարագ՝ նախադասությանը Ս. Պատրիարք Հոր, որը խոսեցավ ներգաղ-թողներուն ուղղյալ իր ամեննե գեղեցիկ քա-րոզներեն մին: Պատարագեն ետքը ներգաղ-թողները հաղորդվեցան:

Իսկ հաջորդ օրը, հոկտեմբեր 5-ին, երեկո-յան ժամը 3-ին, ներգաղթողները հավաքվե-ցան Պատրիարքարանի մեծ դահլիճը, որ այդ օրն զգեցած էր տոնական օրերու իր ամբողջ շքեղանքն ու լուսավառությունը: Անոնք եկած էին Ս. Պատրիարք Հոր և Ս. Հակոբյանց Միաբանության հայտնելու իրենց շնորհա-կալիքը ի փոխարեն այն ջերմ հոգածության, որ ցույց էր տվել առնոց հանդեպ Ս. Աթո-ռը: Ներգաղթի Կոմիտեին առնանալետը շը-նորհակալության ճառ մը ուղղեց Ս. Պատ-րիարքին, որը, իր կարգին, պատասխանեց հայրական ջերմ սիրով տոգորված ճառով, իր իսկ ակնաստեսի սրտառուչ վկայությու-ններով ոգևորելով ներգաղթողները Մայր Հայրենիքի գաղափարով: Ս. Հայրը պարզա-

բանեց ներգաղթի վեհ նշանակությունը թե՛ Հայրենիքի, թե՛ ազգի և թե՛ ներգաղթողնե-րուն համար:

Հոկտեմբերի 13-ին, առավոտը դեռ չբաց-ված, սկսած էր եռուզեոը Ս. Հակոբյանց դարավոր Մայրավանքեն ներս թե դուրս հայկական թաղերուն մեջ: Առավոտյան ժամերգությունեն ետք քաղաքի ամբողջ հայ բնակչությունը բռնած էր կայարանի ճամ-բան. սա պահուն մինչև կայարան ձգվող բոլոր պողոտաներն կլավեր հայ բարբառը. ներգաղթողները կայարան կհավաքվին: Պաղեստինի Հայֆա նավահանգիստը մեկ-նելու համար: Կայարանը կթնդար հայ երգի ձայնեն... հարազատներ անջատումի պահեր կապրին... ոմանք կողջագուրվին, ոմանք ալ կարտասվին մոտալուտ բաժանման համար: Կհնչե մեկնումի առաջին ազդանշանը ու հանկարծ բաղմահազար բերաններն խրոխտ թափ կառնե Սովետական Հայաստանի Պե-տական Հիմնը: Իսկ երկրորդ ազդանշանին, երբ կառախումբը կսկսի շարժիլ, հազարա-վոր ձեռքեր վեր կբարձրանան, բաղմությունը վերածելով ճերմակ թաշկինակներու ալեծը-փուն ծովի մը:


Երուսաղեմի և Յաֆայի կարտականներուն պետք եղավ Հայֆայում սպասել մինչև «Պո-բեդա» շոգենալին ժամանումը: Մպասումի աչդ օրերին Երուսաղեմի և Յաֆայի 1000-ի մոտ ներգաղթողները իջևանեցին Հայֆայի դպրոցն ու եկեղեցիում: մեծ բակը, ուր պատրաստված էին հատուկ վրաններ: Ներ-գաղթի կոմիտեին ջանքերով անոնք շրջա-պատվեցան հոգատարությամբ: Այդ հոգա-տարության կազմակերպմանը, թե բարոյա-կան ու թե նյութական գոհողություններով, իրենց մասնակցությունը բերին Երուսաղեմի Պատրիարքարանը, Պաղեստինահայ Միու-թյունները և անհատներ:

Հոկտեմբերի 27-ին «Պոբեդա» շոգենալը Հայֆայի նավահանգիստը մտավ, բեռնավոր-ված Իրաքի, Սուրիո և Լիբանանի մոտ 3000

ներգաղթողներով: Աննկարագրելի էր եկեղեցիին բակը խռնված ժողովուրդին խինդը: Հաջորդ առավոտ սկսավ ներգաղթողներու տեղավորումը նավուն վրա: Քարափին ու նավը լեցուն էին բազմազար հայերով. ժողովուրդը իր երգերով և ֆանֆառի խումբերը իրենց նվագով քարափը կթնդացնեին:

Մյուս օրը, առավոտյան ժամը 9, 30-ին Երուսաղեմեն, ընկերակցությամբ Հոգ. Տ. Տ. Նղիշե, Հայրիկ և Մյուստոն վարդապետներու, Հայֆայի նավահանգիստ կհասնի Երուսաղեմի Պատրիարք Ամեն. Տ. Կյուրեղ Բ. Սըրբազանը, որը դիմավորվելով Պեյրուքի Սո-

կունենա համբորդական աղոթքներու արարողությունը, որը ձայնասփյուռով կհաղորդվեր նավուն և քարափին վրա գտնվող բազմազար ժողովուրդին: Սա պահուն ամենախոր երկյուղածությամբ ժողովուրդը կմանակցեր խորապես սրտառու այս արարողության. Հայաստանյայց Եկեղեցու սերը սա պահուն ուժգնորեն կթնթացներ բոլոր հայ արտերը: Մենք, Հայաստանյայց Եկեղեցվո և Հայ ժողովրդին զավակներս ողբան կրեթկինք, երբ կտեսնինք որ մեր հարազատ Սովետ Հայաստանի կառավարությունը լայն հետաքրքրություն ցույց կուտա մեր հայրն-



«Պոբեդա» նավը Հայֆայի նավահանգստին մեջ՝ բեռնալորված Սուրիայեն, Լիբանանեն, Իրաքեն և Պաղեստինեն ներգաղթողներով

վետ դեսպանատան քարտուղար Պ. Խանկուլովեն ու ներգաղթի Կոմիտեի անդամներեն, ժողովրդի բռուն ծափերուն և անախտնության օվասիոնին տակ նավ կբարձրանա, ուր առաջնորդվելով նավապետին հյուրասենյակը, չերմ պատվասիրության կարծանանա: Հրաժեշտի պահուն նորին Ամենապատվոթյունը խորապես խանդավառ ու զգացված շնորհակալության խոսքերով նավապետին կհանձնե ծաղկեփունջեր, իբրև Նշան իր սիրուն և գնահատանքին: Ժամը 3-ին նավուն մեծ սրահին մեջ, նախադասությամբ Ամեն. Տ. Կյուրեղ Ս. Պատրիարք Հոր և մասնակցությամբ Ս. Հակոբյանց Միաբանության, տեղի

նանվեր Հայաստանյայց Եկեղեցվո նկատմամբ:

Եկեղեցական այս արարողութենեն հոգ ձայնսփյուռին առջև ողջերթի ճառ կարտասանե Նորին Ամեն. Տ. Կյուրեղ Ս. Պատրիարք Հայրը, հուզումով ու հրճվանքով լեցուն: Կրնենք մեջբերումը Նորին Սրբազնության հառին, որքանով հնար էլավ մեզի արձանագրել:

«Սիրելի եղբայրներ ու քույրեր, Միջադեմքի, Սուրիո, Լիբանանի և Պաղեստինի դուղերեն ու քաղաքներեն Հայրենիք մեկնող մեծեր ու փոքրեր, այս վեհ վարկյանեն սկսյալ դուք բոլորդ ալ երջանիկ քաղաքացիներն եք

մեր ազատ Հայրենիքին: Ձեր կյանքին, ինչպես նաև մեր բովանդակ ազգի կյանքին մեջ ամենին դերերջանիկ ընդունել, որ կապրիրք սա պահում: Հարյուրավոր տարիներու ընթացքին շատ անգամներ Ս. Նրկրի այս ասիերեն անցած են նավեր հայերով բեռնավոր, բայց ոչ մեկ անգամ արնշափ ցնծությամբ ու ուրախությամբ, որչափ այսօր: Կզգամ թիլեցուն եք բոլորդ ալ այն ցնծությամբ, որ իմ է սա պահում: Ցնծուն եք, վասնզի քիչ ետք պիտի ուղղվիք դեպի Մայր Հայրենիք. անոր նվիրելու համար ձեր ուժն ու եռանդը, ձեր ու իմ սիրասուն զավակները: Գիտեմ թե

սիրով ու հարգանքով, վասնզի դուք վայելեցիք Մերձավոր Արևելքի ազնիվ ժողովուրդներու ասպնջականությունը ձեր տարագրության դաժան օրերին մինչև այսօր:

Ձեր այդ երջանիկ սրտերուն հետ միասին տարեք մեր համբույրները մեր Հայրենիքին, անոր հող ու ջուրին, անոր լեռներուն, երկնաման տաճարներուն ու սրբավայրերուն: «Գնացե՛ք» ըսավ մեր Տերը իր աշակերտներուն դարձյալ այս ափերին, երբ հնչած էր անոնց մեծ առաքելության ժամը:

Գնացե՛ք, — կըսեմ և ես ձեզ այս նվիրական պահուն, — վասնզի ձեր ալ մեծ առա-



Հայփայի եպիսկոպոսի Բարսիլեմ վրա.
Ամեն. Տ. Կյուրեղ Ս. Պատրիարքը եպի կառաջնորդվի

ուրախ եք, վասնզի հրաժեշտ կառնեք այս ափերեն պատվով, ձեզի հետ աանելով Մերձավոր Արևելքի ժողովուրդներու սերն ու համակրանքը: Քիչ անգամներ պատահած է պատմության մեջ, որ Մերձավոր Արևելքի բնիկ ժողովուրդները եկվոր ժողովուրդներ բաժնվին սիրով ու արցունքով: «Մենք ձեզ սիրեցինք, — կրեն անոնք, — վասնզի դուք բերիք մեր երկիրներուն օրհնություն, աշխույժ ու կենդանություն, մեր արվեստին, արհեստին ու առևտուրին հառաջդիմություն»: Ու թող ոսկի տառերով արձանագրեն պատմությունը այս իրողությունը: Երջանիկ եք դուք, որ կրածնվիք փոխադարձ

քելությունն է, որ կսկսի այս պահեն, ծառայել մեր ամենասիրելի Հայրենիքին ձեր ամբողջ կարելիություններով: Մեր ազատության 600 տարիներու կարոտին ամբողջ թափովը ծառայեցեք Մայր Հայրենիքին. իբրև հավատարիմ քաղաքացիները, նախանձախնդիր անոր կատարելագույն բարգաւաճման ու հառաջդիմության, ձեր հողիով, ձեր միտքով ու մարմնով ծառայեցեք, նույն ատեն միշտ հիշելով այն երախտագիտության ըզգացմունքը, որ կլեցնե ու պետք է լեցնե ձեր սիրտն ու հոգին հանդեպ ռուս մեծ ժողովուրդին և անոր հանճարեղ առաջնորդներուն: Վասնզի դիտեք, իմ սիրելին՛ր, որ 600

տարիներ շարունակ ձեր հայրերը արյուն ու արցունք թափեցին իրենց հայրենիքի ազատության համար ու հակառակ ատոր մեր թշնամիները 600 տարիներ շարունակ չի լինելիություն դատապարտել ուզեցին մեր այդ մեծ իտեակը, որ վերջապես այսօր իր լինելիության ակը կգտնե քրեմլին և Ստալինի սրտին մեջ:

Մեծ է Աստուծո ռոդը մութիւններ, թող օրհնյալ ըլլա կամքը Անոր և օրհնյալ ըլլան անոնք, որ իրագործեցին այդ կամքը: Երթայք, բարո՛վ, երթայք խաղաղությամբ, Տեր ընդ ձեզ:

Նորին Սրբազնութենեն ետք խոսք առին նաև ներգաղթի կոմիտեին նախագահը՝ Տոքթ. Թորյան և նախնի նախապետը, որուն խոսքերը հայերենի թարգմանվեցան Պ. Զարյանի կողմէ: Այնուհետև, բոլոր ներգաղթողներուն այցելելն ետք, Ս. Պատրիարքը նախնի վարկիճն ու կկանգնի ի գլուխ քարափը գտնվող ողջերթի եկած պաղեստինահայ իր հոտին: Կհնչի նախնի մեկնումի առաջին ազդանշանը. նախնի վրայեն կսլփի Սովետ Միության Հիմնը. ապա կնվազվի Սովետ Հայաստանի Պետական Հիմնը, որուն կծայնակցի

18 նոյեմբերի 1947 թ. Նրուսաղեմ

ՏԻՐԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ Ամերիկայի հայոց

ՆԵՐԳԱՂԹԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մայր Հայաստանի կողմ իր զավակներուն իր արձագանքը կգտնե ամեն հայ սրտերու մեջ: Հին հին դարերու կռակը, անթեղված հայ հոգիին մեջ, կմղե զանոնք իրենց հողին, անոր ընդերքն դուրս բերելու հայուն տուրքը ազգին ու մարդկության:

Կարավանները, որ ետևն ետև կմեկնին Հայրենիք, ապացույցը կուտան այն հաղթանակին, զոր հայ ժողովուրդը իր մարտիրոսներով 1947 թ. Նյու-Յորք

ԽՍՀՄԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏ. — Սրտանց ողջունում ենք հայրենադարձության սուրբ գործին օժանդակելու համար Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության կողմից նախաձեռնված երկրորդ միլիոն դոլարի հանգանակությունը և ցանկանում ենք հաջողությամբ պսակված տեսնել այդ հայրենանվեր ու Աստուածահաճո գործը:

Մենք լիահույս ենք և խորը հավատն ունենք, որ հայ ժողովուրդի սիրասուն զավակներն արտասահմանում ոչինչ չեն խնայի ի-

նավուն ու քարափին վրա գտնվող բազմահազար հայությունը, նավահանդիսուն թնդացնելով երգի ձայնն:

Բոլորը լեցուն էին իրենց հայրենիքին ու ժողովուրդին սիրովն ու հպարտությամբ: Ու՛վ մտքն կանցներ սա պահը 30 տարիներ առաջ, երբ խոճապահար դեպի Պաղեստին կխուժեին թշնամիներ խոր խոցված ու անարգված հայ որբն ու խորին, մերկանդամ, քաղցած ու վերափր...

Ու պահ մըն ալ... և վերջին սուղոցին հետ կշարժի հսկա նավը: Վայրկենական լուսություն կտիրե թե նախնի մեջ և թե քարափին վրա... ու ապա հազիվ լսելի, բայց խորունկ հեկեկոց մը կփրթի բոլոր սրտերեն... և արցունքներու հոսումին հետ բազմահազար թաշկինակներ կշարժին նավեն ու քարափին: Անոնք Հայրենիք կմեկնին, այնտեղ, Արարատի ոտքին տակ, իրենց երջանիկ ու վառ ապագան կբարեկու: Իսկ քարափին վրա գտնվող ժողովուրդը երկար ժամեր անշարժ տեղում դամված մնաց, մինչև որ մուկին մեջ իր բազմաթիվ լույսերով փայլելի ու նավը հորիզոնի վարագույրին ետևն անցավ:

ՊԱՂԵՍՏԻՆՅԻ

սության գինով տարավ զինք բնաջինջ ընել վճռած բարբարոս ազգին վրա:

Ամերիկայի հայությունը այս հաղթանակին պետք է մասնակցի իր դրամով, քանի առ այժմ այդ միայն ընել բաց է իրեն: Երկրորդ միլիոն տոլարի հանգանակությունը, որ սկսած է, պետք է ամենքս դարձնենք հաջողություն: Պետք է մեկդի դենք ամեն վերապահություն և անգամ մը ևս ուս տանք այս գործին:

իրենց տարագիր, հարազատ եղբայրների ու քույրերի հայրենադարձությունը դուրացնելու համար:

Արտասահմանի հայ հոգևորականությունը սրբազան պարտականություն ունի իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով օգնելու Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությանը, որպեսզի երկրորդ միլիոն դոլարի հանգանակությունը նույնպիսի հաջողությամբ պսակվի, ինչպիսի հաջողությամբ որ ավարտվել է առաջին միլիոն դոլարի հանգանակությունը: